

Աշխեն Գրիգորյան,
Հայոց եկեղեցու պատմության ուսուցչուհի
Պատմական գիտությունների թեկնածու



-Ողջուն : Հասարական գիտությունների ամբիոնը և մենք կազմակերպել ենք ամանորյա հարցում: Կներկայանա՞ք:

-Ողջուն: Ես Աշխեն Գրիգորյանն եմ, պատմության ուսուցչուհի: Սովորել եմ Երևանի պետական համալսարանում: 10 տարի է՝ աշխատում եմ ճեմարանում:

-Ո՞րն է եղել 2017 թվականի Ձեր ամենահիշարժան պահը, որը կցանկանաք, որ կրկնվի:

-2017 թվականի իմ ամենահիշարժան պահը սպասվում է հաջորդ շաբաթ՝ հանդիպում ընտանիքիս հետ:

-Իսկ ո՞րն է եղել այս տարվա Ձեր ամենամեծ նպատակը, և արդյո՞ք հասել եք դրան:

-Ճիշտն ասած, ես մեծ նպատակներ չեմ դնում իմ առաջ, բայց ամենօրյա ցանկություն է, որ օրս լավ անցնի:

-Ի՞նչ կհիշեք ամանորյա հուշերից:

-Ամանորյա հուշերից շատ լավ բաներ կարող եմ հիշել, ամեն տարի ինձ զարմացնում էին նվերները, ու ես հավատում էի Ձմեռ պապին:

-Իսկ ի՞նչ ակնկալիքներ ունեք հաջորդ տարվանից:

-Ոչ մեկին տխուր չտեսնեմ, որ բոլորը լինեն երջանիկ, ուրախ, հաջողակ:

-Շնորհակալություն հարցազրույցին մասնակցելու համար:

-Խնդրեմ:

